«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

22 Մայիսի 2024, N 10 - 3

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ՆԻՍՏՈՒՄ (ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3) ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 1-ի նիստում (արձանագրություն N 3) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի աշխատակարգում» կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1.5-րդ կետում «ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտորը» բառերը փոխարինել «ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը» բառերով.

2) 3.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.1. Ուսումնամեթոդական հանձնաժողովի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը (նախագահ), ուսումնական բաժնի պետը, որակի ապահովման բաժնի պետը: Հանձնաժողովի մյուս անդամներն ընտրվում են ՀՊՏՀ գիտական խորհրդում: Հանձնաժողովի կազմում փոփոխություններ կատարվում են նույն կարգով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ա. Վ. Գրիգորյան**

2024 մայիսի 22
Երևան